

Ո՞ՒՄ Է ՁԵՌՆՏՈՒ «ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ»

Posted on December 8, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Մարիա Կարաթորոսեան, [Ասպարեզ](#), 7 Դեկտեմբեր 2011

Հայ Դատի եւ Հայոց պահանջատիրութեան խնդիրներով զբաղուող հասարակական կազմակերպութիւնները վերջերս Սփիւռքում՝ յատկապէս ԱՄՆում եւ Ֆրանսիայում, աննախադէպ ակտիւութիւն (աշխուժութիւն-խմբ.) են ցուցաբերում: Միմեանցից

✘ անկախ, յաճախ նաեւ միմեանց դեմ գործող կազմակերպութիւնները նաեւ վերամբարձ անուններ ունեն՝ «Արեւմտահայոց ազգային խորհուրդ», «Արեւմտահայոց կառավարութիւն». այժմ էլ շատ է խօսուում մոսկուայաբնակ Կարեն Միքայելեանի նախաձեռնութեան՝ 1917 եւ 1919 թուականների համաժողովների իրաւայաջորդը հռչակած «Արեւմտահայերի երրորդ համագումարի» մասին, որը Դեկտեմբերի 10ին Փարիզի Սէր արուարձանում համագումար կը հրաւիրի: Բայց արդեօ՞ք այս կազմակերպութիւնները նպաստում են ընդհանուր գործին, այն է՝ Հայ Դատի եւ պահանջատիրութեան հարցերին:

ՀՅԴ Հայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենեակի պատասխանատու Կիրո Մանոյեանը նշում է, որ այդ կազմակերպութիւնները մինչեւ հիմա որեւէ արդիւնք չեն տուել, բայց, մանաւանդ վերջինը, հրապարակայնօրէն վնասելու հաւանականութիւն ունի եւ կարող է ներքին պառակտման նորանոր շերտեր աւելացնել:

«Մենք սկզբունքային խնդիր ունենք սրա հետ. իրենք կարծում են, թէ Հայաստանի Հանրապետութիւնը (ՀՀ-ն) ո՛չ իրաւունք ունի, ո՛չ էլ իրաւաժառանգորդն է Առաջին Հանրապետութեան: Կարծում ենք, որ Հայաստանի հանրապետութիւնը ոչ միայն իրաւաժառանգորդն է, այլեւ այդ տարածքների բուն պատասխանատուն եւ իրաւատէրը, որովհետեւ խօսքը ոչ թէ տարածքները արեւմտահայերին վերադարձնելու, այլեւ հայ-թուրքական սահմանը վերագծելուն է», մեզ հետ զրոյցում ասաց Կիրո Մանոյեանը:

«Վասպուրականի նոր սերունդ» հայրենակցական միութեան նախագահ Մարինէ Վահրադեանը նոյնպէս հրաւեր է ստացել՝ մասնակցելու Փարիզի Սէր արուարձանում կայանալիք «Արեւմտահայերի երրորդ համագումար»ին, աւելին՝ նա նաեւ համակարգելի եւ գործող հայրենակցական միութիւններին տեղեկացրել էր փարիզեան այս հաւաքի մասին եւ ընդգրկուել Հայաստանեան կազմկոմիտեում՝ հաւատալով, որ համագումարի ընթացքում պետք է վեր հանուեն Արեւմտեան Հայաստանի ժառանգների խնդիրները:

Արեւմտահայերի ժառանգների լիազօր ներկայացուցիչները երեւանում ստեղծում են կազմկոմիտէ, որում ընդգրկուում են արմատներով արեւմտահայ պատմաբաններ, թուրքագետներ, իրաւագետներ: Կազմկոմիտէի ղեկավար Արկադի Տէր Թադեւոսեանի պնդմամբ, սակայն, Կարեն Միքայելեանը ստիպուած է լինում ներկայացնել Փարիզում հնչեցնելիք յայտարարութեան տեքստը, ինչից յետոյ թէ՛ կազմկոմիտէն, թէ՛ հայրենակցական միութիւնների մեծ մասը հրաժարուում է յետագայ մասնակցութիւնից: Նրանց մասնաւորապէս զայրացնում է յայտարարութեան այն հատուածը, որտեղ նշուում

Ե, որ ՀՀն լիազորված չէ ներկայացնել արեւմտահայերի շահերը:

«Ներկայիս ՀՀն, համաձայն իր Սահմանադրութեան, իրաւայաջորդը չէ Առաջին Հանրապետութեան, լիազորված չէ աշխարհում սփռուած արեւմտահայերի շահերը ներկայացնել: Ի վիճակի չէ առնուազն տեսանելի ապագայում ստանձնելու արեւմտահայութեան ճակատագրին եւ ապագային առնչուող իւրայատուկ խնդիրների, յատկապէս պահանջատիրութեան խնդրի լուծման առաքելութեանը», Սեւրում պատրաստուում է յայտարարել Կարէն Միքայելեանը:

Մարինէ Վահրադեանը, բոլոր նրանց, ովքեր դեռեւս շարունակում են հաւատալ Կարէն Միքայելեանին, խորհուրդ է տալիս զգուշանալ եւ լաւ ծանօթանալ նրա հրապարակելիք տեքստին:

Կիրո Մանոյեանը պնդում է՝ Կարէն Միքայելեանի մտքում արմատացած է գաղափարը, թէ արեւելահայերը սովետահայ են, իսկ արեւմտահայերն իսկական հայերն են:

«Այսօր այնպիսի վիճակ է, որ շատ էլ պարզ չէ, թէ ով է արեւելահայ, ով արեւմտահայ: Այն մարդկանց ժառանգները, ովքեր ներգաղթել են եւ, ասենք, 60 տարի ապրում են այստեղ, հիմա՝ ի՞նչ են արեւելահայ, թէ արեւմտահա՞յ», ասաց նա:

Մեր հարցին, թէ արդեօ՞ք Փարիզի համագումարի մասնակիցներն իրաւունք ունեն իրենց 1917 եւ 1919 թուականների համագումարների իրաւայաջորդը համարել, Կիրո Մանոյեանն ասաց, որ նրանք արդէն իսկ դաւաճանում են հենց նոյն՝ Արեւելահայոց երկրորդ համագումարի մօտեցումներին ու սկզբունքներին, քանի որ այստեղ նշուում էր, որ այդ ժամանակուայ Հայաստանի Հանրապետութիւնը համայն հայութեան հայրենիքն էր, այն պէտք է ընդլայնուի եւ դառնայ միացեալ Հայաստան:

«Կարծելով, որ ինչ որ դրական բան են անում, սա կարող է գործին վնասել, որովհետեւ սա նաեւ շփոթ կը ստեղծի եւ կ'օգտագործուի օտար շրջանակների կողմից՝ մեզ իրականում զրկելով այն հիմնական իրաւունքից, յատկապէս տարածքների նկատմամբ, որ ունի Հայաստանը», ասաց Կիրո Մանոյեանն ու յաւելեց. «Պէտք է ուշքի գան եւ այդ մտքից հետ կանգնեն: Չեմ կարծում, որ բոլոր մասնակիցներն են զգում, որ դա խաղ է: Պէտք է հետ կանգնել, քանի դեռ ուշ չէ»:

Դաշնակցական գործիչը յիշեցնում է, որ այս միտքը նոր միտք չէ եւ շրջանառութեան մեջ եղել է նաեւ 20 տարի առաջ՝ Ղարաբաղեան շարժման նախօրէին:

Մարինէ Վահրադեանը չի բացառում, որ այն կարող է նաեւ օտար երկրների պատուէր լինել: Նա նաեւ պնդում է, որ Կարէն Միքայելեանը, անօրինական համաժողով է կազմակերպել Երեւանում, իսկ մամուլում կեղծ տեղեկատուութիւն է տարածել՝ հանդէս գալով համաժողովին չմասնակցած հայրենակցական միութիւնների եւ անդամների անունից:

